Տնտեսական և արժութային խնդիրներ

Ներածություն

Տնտեսական և արժութային խնդիրների բնագավառում ՀՀ օրենսդրությունը, բացառությամբ առանձին սահմանումների, հիմնականում չի համապատասխանում ԵՄ օրենսդրության պահանջներին:

Տնտեսական և արժութային խնդիրների բնագավառում Եվրամիության օրենսդրությունը կարգավորում է արտոնյալ մուտքի արգելման իրականացման, կենտրոնական բանկի կողմից պետական հատվածին տրվող վարկերի, կապիտալի ազատ տեղաշարժի, կենտրոնական բանկի կողմից վիճակագրական տեղեկատվության հավաքման, կենտրոնական բանկի պատժամիջոցներ կիրառելու լիազորությունների, նվազագույն պարտադիր պահուստների կիրառման, հավելյալ պակասուրդի իրականացման արարողակարգի հետ կապված խնդիրները: Տնտեսական և արժութային խնդիրների բնագավառը կարգավորող ՀՀ գործող օրենսդրությունն ընդգրկում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»[1], «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին»[2], «Վարկային կազմակերպությունների մասին»[3] ՀՀ օրենքները, «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները»[4] ՀՀ կառավարության որոշումը և այլ իրավական ակտեր, որոնք, սակայն, չեն ներառում ԵՄ օրենսդրության պահանջները:

Եվրամիության օրենսդրությունում հստակորեն արգելվում է որևէ միջոցառում, որը **«արտոնյալ մուտքի»** հնարավորություն է տալիս պետական կազմակերպություններին և մարմիններին, կենտրոնական կառավարությանը, տեղական և այլ պետական մարմիններին: Արտոնյալ մուտք առաջացնող միջոցառում է համարվում պետական մարմինների ընդունած որևէ օրենք, կանոնակարգ կամ իրավական գործիք, որը պարտադրում է կամ արտոնյալ պայմաններ տրամադրելով՝ շահագրգռում է ֆինանսական կազմակերպություններին ձեռք բերել կամ պահել պետական պարտավորություններ: Հիմնվելով համեմատական վերլուծության արդյունքների վրա՝ պետք է ընդգծել, որ ՀՀ օրենսդրությունը այս խնդրի վերաբերյալ բաց է: Կարիք կա մշակելու կառավարության որոշման նախագիծ, որը կվերաբերեր բոլոր ֆինանսական կազմակերպություններին և կկարգավորեր արտոնյալ մուտքի հետ կապված իրավահարաբերությունները:

Եվրամիության օրենսդրությունը արգելում է կենտրոնական բանկի կողմից պետական հատվածին տրամադրել վարկային միջոցներ, որոնք կարող են բերել դեբիտի հաշվեկշռի փոփոխության: ԵՄ օրենսդրությունում հստակորեն սահմանված են, թե որոնք կարող են համարվել նման վարկային միջոցներ, և դրանք տարանջատված են այն վարկային միջոցներից, որոնք բացառություն են կազմում: Մասնավորապես, կենտրոնական բանկի կողմից այլ պետությունների թողարկած պետական պարտատոմսերի առքն ու վաճառքը փոխարժեքի կարգավորման նպատակով մեկ օրվա կտրվածքով կենտրոնական բանկի տրամադրված վարկերը, կենտրոնական բանկի կողմից միջազգային կազմակերպությունների տրամադրած պարտքի մարումը բացառություն են կազմում: Այս խնդրի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման նպատակով կարիք կա փոփոխություններ և լրացումներ կատարելու «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում:

Կապիտալի ազատ տեղաշարժի վերաբերյալ ԵՄ օրենսդրությունը հստակորեն սահմանում է կապիտալի տեղաշարժ համարվող գործունեությունների անվանացանկը՝ մանրամասն նկարագրությամբ: Զգալի կարևորություն է տրվում կարճ ժամանակահատվածում կապիտալի հսկայական ծավալների տեղաշարժի հետևանքով առաջացող փոխարժեքի տատանումներին, որոնք կարող են հանգեցնել ֆինանսական և արժութային քաղաքականության ձախողման: Նկարագրվում են այն հնարավոր օրենսդրական պաշտպանական միջոցները, որոնք կարող են կիրառվել՝ խույս տալով բացասական հետևանքներից: Հիմնվելով համեմատական վերլուծության արդյունքների վրա՝ կարելի է եզրակացնել, որ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքում նկարագրված դաշտը լիովին ազատականացված է: Այս ոլորտում ՀՀ օրենսդրությունը զգալի վերանայումների կարիք ունի: «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքում ներկայացված օտարերկրյա ներդրումների տեսակների և իրականացման ձևերի անվանացանկը զգալի լրացումների կարիք ունի: Կարիք կա նաև օրենքում առանձին բաժին ունենալ՝ կապված կարճ ժամանակահատվածում իրականացված մեծածավալ օտարերկրյա կապիտալի ներհոսքի հետևանքով առաջացած փոխարժեքի տատանումներից հնարավորինս խուսափելու հետ: Սրա հետ կապված խնդիր է նաև տեղական բանկերի լուծարման հետ կապված իրավահարաբերությունների կարգավորումը:

---

[1] ՀՕ-69, 30.06.1996թ.:
[2] ՀՕ-137, 24.06.1997թ.:
[3] ՀՕ-169, 03.04.2001թ.:
[4] 237-Ն, 20.09.2004թ.:

ԵՄ օրենսդրությունը կարգավորում է նաև Եվրոպական կենտրոնական բանկի կողմից վիճակագրական տեղեկատվության հավաքման հետ կապված իրավահարաբերությունները: Այն ընդգրկում է նորմեր, որոնք սահմանում են ազգային տնտեսության չափերը, «Կենտրոնական բանկ» ենթաբաժնի դասակարգումը, արժութային և այլ ֆինանսական կազմակերպությունների դասակարգումը, վիճակագրական հաշվետվությունների հետ կապված պահանջները, կարգավորումը, գաղտնիությունը և պատժամիջոցների կիրառումը: Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ այս ոլորտում ՀՀ օրենսդրությունը բավական թերի է և լրացումների կարիք ունի: Կարիք կա մշակելու նոր կանոնակարգ, որը կկարգավորեր կենտրոնական բանկի կողմից վիճակագրական տեղեկատվության հավաքման հետ կապված իրավահարաբերությունները:

Չնայած «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը և «Բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կամ դրանց ղեկավարների կողմից օրենսդրության խախտումների արձանագրման, վարույթների ընթացակարգերի և պատժամիջոցների կիրառման մասին» ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումը կարգավորում են կենտրոնական բանկի կողմից պատժամիջոցներ կիրառելու իրավահարաբերությունները, այնուամենայնիվ, Եվրամիության պահանջներին համապատասխանեցնելու համար կարիք կա կատարելու լրացումներ:

Նվազագույն պարտադիր պահուստների վերաբերյալ ԵՄ օրենսդրությունը սահմանում է պարտադիր պահուստների հաշվարկման կարգը: Առանձին հոդվածներով ներկայացված են պարտադիր պահուստավորման ենթակա ֆինանսական կազմակերպությունները և ֆինանսական կազմակերպությունների պարտավորությունները, որոնք հիմք են պարտադիր պահուստների հաշվարկման համար: Ներկայացված են նաև այն ֆինանսական կազմակերպությունները և պարտավորությունները, որոնք բացառություն են կազմում: Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ կան զգալի տարբերություններ ՀՀ օրենսդրության և ԵՄ օրենսդրության պահանջների միջև: «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշման մեջ ՀՀ տարածքում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է ներգրավված միջոցների 6 տոկոսի չափով: ԵՄ օրենսդրությունը չի նախատեսում որոշակի տոկոսադրույք պարտադիր պահուստների համար: Եվրամիությունում պարտադիր պահուստների գործակիցը հաշվարկվում է հետևյալ սկզբունքով: 2 տարուց ավելի ժամկետով համաձայնեցված ավանդների, ռեպոների և 2 տարուց ավելի ժամկետ ունեցող պարտատոմսերի համար պահուստի գործակիցը սահմանվում է 0 տոկոս: Մնացած պարտավորությունների համար պահուստի գործակիցը սահմանվում է 2 տոկոս: Ֆինանսական կազմակերպության նվազագույն պարտադիր պահուստի գործակիցը հաշվարկվում է կշռված միջինի մեթոդով՝ հաշվի առնելով տարբեր պարտավորությունների տեսակարար կշիռը: Ընդ որում, պահուստավորման հիմք համարվող առանձին պարտավորություններից ոչ մեկի տեսակարար կշիռը չպետք է գերազանցի պահուստավորման ենթակա որևէ այլ պարտավորության 10%-ը: ԵՄ և ՀՀ օրենսդրությունների միջև զգալի տարբերություն կա նաև դիտարկվող ժամանակահատվածի առումով: Նվազագույն պարտադիր պահուստների վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը համապատասխանեցնելու նպատակով կարիք կա փոփոխություններ և լրացումներ կատարելու «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում և «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշման մեջ:

Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետությունում հավելյալ պակասորդի իրականացման կարգի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրական դաշտը բավական թերի է: «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը սահմանում է հավելյալ պակասորդի չափը, սակայն կան զգալի թվով սահմանումներ, որոնք բացակայում են: Մասնավորապես, ԵՄ օրենսդրությունում կարգավորվում են նաև այնպիսի իրավահարաբերություններ, որոնք կապված են հավելյալ պակասուրդի փաստացի չափի սահմանված նորմերից բարձր լինելու հետ: Այսպիսի նորմերը բացակայում են ՀՀ օրենսդրությունում: ՀՀ օրենսդրությունում կարիք կա կատարելու լրացումներ Եվրամիության պահանջներին համապատասխան՝ մանրամասն կարգավորման համար:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Տնտեսական և արժութային խնդիրներ» ենթագլուխը մինչև 2009 թվականը ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2007 թվական

ՀՀ տնտեսական և արժութային խնդիրների մասին օրենսդրությունը կհամապատասխանեցվի 1993թ. նոյեմբերի 22-ի թիվ 3603/93, 1993թ. դեկտեմբերի 13-ի թիվ 3604/93, Եվրամիության խորհրդի 1998թ. նոյեմբերի 23-ի թիվ 2533/98 կանոնակարգերին և Խորհրդի 1998թ. հունիսի 7-ի թիվ 88/361/ԵՏՀ դիրեկտիվին[5]:

Արտոնյալ մուտքի արգելման իրականացման խնդիրների իրավական կարգավորման նպատակով կմշակվի ՀՀ կառավարության որոշում, որը կկարգավորի ֆինանսական կազմակերպությունների կողմից պետական պարտատոմսերի և այլ պարտավորությունների ոչ արտոնյալ պայմաններով ձեռք բերելու և պահելու հետ կապված իրավահարաբերությունները:

ԵՄ օրենսդրությունը, Խորհրդի 1998թ. հունիսի 7-ի թիվ 88/361/ԵՏՀ դիրեկտիվին համապատասխան, արգելում է կենտրոնական բանկի կողմից պետական հատվածին տրամադրել վարկային միջոցներ, որոնք կարող են բերել դեբիտի հաշվեկշռի փոփոխության: Այս խնդրի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման նպատակով կարիք կա փոփոխություններ և լրացումներ կատարելու «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում:

Կապիտալի ազատ տեղաշարժի հետ կապված խնդիրների օրենսդրական կարգավորման բացը Խորհրդի 1993թ. դեկտեմբերի 13-ի թիվ 3603/93 կանոնակարգին համապատասխան լրացնելու նպատակով լրացումներ կկատարվեն «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքում:

Կենտրոնական բանկի կողմից վիճակագրական տեղեկատվության հավաքման խնդիրների հետ կապված իրավական խնդիրների կարգավորման նպատակով կմշակվի Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կանոնակարգի նախագիծ:

2008 թվական

Տնտեսական և արժութային խնդիրների բնագավառի ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի Խորհրդի 1993թ. նոյեմբերի 22-ի թիվ 3605/93, 1997թ. հուլիսի 7-ի թիվ 1467/1997 կանոնակարգերին[6], 1998թ. նոյեմբերի 23-ի թիվ 2531/98 և թիվ 2532/98 կանոնակարգերին, Եվրոպական կենտրոնական բանկի 1999թ. սեպտեմբերի 23-ի թիվ 2157/1999 և 2003թ. սեպտեմբերի 13-ի թիվ 1745/2003 կանոնակարգերին[7]:

Հավելյալ պակասորդի արարողակարգի վերաբերյալ իրավահարաբերությունները Եվրամիության օրենսդրության Խորհրդի 1993թ. նոյեմբերի 22-ի թիվ 3605/93 և 1997թ. հուլիսի 7-ի թիվ 1467/1997 կանոնակարգերի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով լրացումներ և փոփոխություններ կկատարվեն «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում և կմշակվի օրենքի նախագիծ «Հավելյալ պակասուրդի արարողակարգի վերաբերյալ»:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից պատժամիջոցներ կիրառելու իրավահարաբերությունները ԵՄ օրենսդրության Խորհրդի 1998թ. նոյեմբերի 23-ի թիվ 2532/98 կանոնակարգի և Եվրոպական կենտրոնական բանկի 1999թ. սեպտեմբերի 23-ի թիվ 2157/1999 կանոնակարգի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով լրացումներ և փոփոխություններ կկատարվեն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում և 2002թ. մարտի 19-ի «Բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կամ դրանց ղեկավարների կողմից օրենսդրության խախտումների արձանագրման, վարույթների ընթացակարգերի և պատժամիջոցների կիրառման մասին» ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 71 որոշման մեջ:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից նվազագույն պարտադիր պահուստների կիրառման հետ կապված իրավահարաբերությունները ԵՄ օրենսդրության Խորհրդի 1998թ. նոյեմբերի 23-ի թիվ 2531/98 կանոնակարգի և 2003թ. սեպտեմբերի 13-ի Եվրոպական կենտրոնական բանկի թիվ 1745/2003 կանոնակարգի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով լրացումներ և

---

[5] 1993թ. դեկտեմբերի 13-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 3603/93՝ «Պայմանագրի 104 և 104b հոդվածներին վերաբերող արգելումների իրականացման սահմանումների նկարագրումը»,1993թ. դեկտեմբերի 13-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 3604/93՝ «Արտոնյալ մուտքի արգելման իրականացման սահմանումների նկարագրումը» պայմանագրի 104 հոդվածի վերաբերյալ, 1998թ. նոյեմբերի 23-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 2533/98՝ «Եվրոպական կենտրոնական բանկի կողմից վիճակագրական տեղեկատվության հավաքումը», 1988թ. հունիսի 7-ի Խորհրդի դիրեկտիվը թիվ 88/361/ԵՏՀ՝ «Պայմանագրի 67-րդ հոդվածի իրականացման համար»:

[6] 1993թ. նոյեմբերի 22-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 3605/93՝ «Հավելյալ պակասորդի արարողակարգի իրականացման փաստաթուղթ»՝ կցված Եվրոպական համայնքի հիմնադրման պայմանագրին, 1997թ. հուլիսի 7-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 1467/1997՝ «Հավելյալ պակասորդի արարողակարգի իրականացման պարզեցումը և արագացումը»:

[7] 1998թ. նոյեմբերի 23-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 2531/98՝ «Եվրոպական կենտրոնական բանկի կողմից նվազագույն պարտադիր պահուստների իրականացումը», 1998թ. նոյեմբերիի 23-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 2532/98՝ «Պատժամիջոցներ կիրառելու Եվրոպական կենտրոնական բանկի լիազորությունները», 1999թ. սեպտեմբերի 23-ի Եվրոպական կենտրոնական բանկի կանոնակարգ թիվ 2157/1999՝ «Պատժամիջոց կիրառելու Եվրոպական կենտրոնական բանկի լիազորությունները», 2003թ. սեպտեմբերի 13-ի Եվրոպական կենտրոնական բանկի կանոնակարգ թիվ 1745/2003՝ «Նվազագույն պահուստների կիրառումը»:

փոփոխություններ կկատարվեն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում և 2004թ. սեպտեմբերի 20-ի «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 237 որոշման մեջ:

1. Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
2007						
1.	«Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	1993թ. դեկտեմբերի 13-ի թիվ 3604/93 Խորհրդի կանոնակարգ «Արտոնյալ մուտքի արգելման իրականացման սահմանումների նկարագրությունը» պայմանագրի 104 հոդվածի վերաբերյալ	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի մասնակցությամբ)	1-ին եռամսյակ	15	
2.	«Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	1988թ. հունիսի 7-ի թիվ 88/361/ԵՏՀ Խորհրդի դիրեկտիվը Պայմանագրի 67րդ հոդվածի իրականացման համար	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	1-ին եռամսյակ	18	
3.	«Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքում, փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	1993թ. դեկտեմբերի 13-ի թիվ 3603/93 Խորհրդի կանոնակարգ «Պայմանագրի 104 և 104b հոդվածներին վերաբերող արգելումների իրականացման սահմանումների նկարագրումը»	ՀՀ կենտրոնական բանկ	2-րդ եռամսյակ	15	
4.	«Կենտրոնական բանկի կողմից վիճակագրական ինֆորմացիայի հավաքագրման» կենտրոնական բանկի կանոնակարգի նախագծի մշակում	1998թ. նոյեմբերի 23-ի թիվ 2533/98 Խորհրդի կանոնակարգ «Եվրոպական Կենտրոնական Բանկի կողմից վիճակագրական ինֆորմացիայի հավաքումը»	ՀՀ կենտրոնական բանկ (ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մասնակցությամբ)	2-րդ եռամսյակ	33	Խորհրդատվություն

ԸՆԴԱՄԵՆԸ					81	
2008						
5.	• «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • «Բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կամ դրանց ղեկավարների կողմից օրենսդրության խախտումների արձանագրման, վարույթների ընթացակարգերի և պատժամիջոցների կիրառման մասին» ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի մշակում	1998թ. նոյեմբերիի 23-ի թիվ 2532/98 Խորհրդի կանոնակարգ «Պատժամիջոցներ կիրառելու Եվրոպական կենտրոնական բանկի լիազորությունները» 1999թ. սեպտեմբերի 23-ի թիվ 2157/1999 Եվրոպական կենտրոնական Բանկի կանոնակարգ «Պատժամիջոց կիրառելու Եվրոպական Կենտրոնական բանկի լիազորությունները»	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի մասնակցությամբ)	1-ին եռամսյակ	45	
6.	• «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում • « Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կենտրոնական բանկի խորհրդի որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի մշակում	1998թ. Նոյեմբերի 23-ի թիվ 2531/98 Խորհրդի կանոնակարգ «Եվրոպական Կենտրոնական Բանկի կողմից նվազագույն պահուստների իրականացումը,» 2003թ. սեպտեմբերի 13-ի թիվ 1745/2003 Եվրոպական կենտչոնական Բանկի կանոնակարգ «Նվազագույն պահուստների կիրառումը»	ՀՀ կենտրոնական բանկ	2-րդ եռամսյակ	33	
7.	• «Հավելյալ պակասուրդի արարողակարգի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	1993թ. նոյեմբերի 22-ի թիվ 3605/93 Խորհրդի կանոնակարգ «Հավելյան	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	4-րդ եռամսյակ	27	Խորհրդատվություն

	• «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին » ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	Պակասորդի արարողակարգի իրականացման փաստաթուղթ» կցված Եվրոպական Համայնքի հիմնադրման պայմանագրին 1997թ. հուլիսի 7-ի թիվ 1467/1997 Խորհրդի կանոնակարգ «Հավելյան պակասորդի արարողակարգի իրականացման պարզեցումը և արագացումը»				
ԸՆԴԱՄԵՆԸ					105	

2. Ինստիտուցիոնալ կարողություններ

0	1	2	3	4
NN ը/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ կենտրոնական բանկ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն	-	Կենտրոնական բանկի կողմից վիճակագրական ինֆորմացիայի հավաքագրման վերաբերյալ դասընթաց (5 օր / 2007թ.)	Խորհրդատվություն
2.	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	-	Հավելյալ Պակասորդի արարողակարգի իրականացման վերաբերյալ դասընթաց (3 օր / 2008թ.)	Խորհրդատվություն
3.	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով	-	Եվրամիությունում համակենտրոնացումների կարգավորման վերաբերյալ դասընթացներ (2007-2008թթ.)	Խորհրդատվություն